

թեան, հողագործութեան, ճարտարարուեստի եւ վաճառականութեան միջոցաւ :

Գ. Կ'ապացուցանեն թէ հայերը պետական տուրքը վճարելու միշտ տրամադիր եղած են :

Դ. Կուտան հայերուն սեփականատիրութեան իրաւունքներ :

Ե. Կը տրամադրեն հաւաքել հայեր՝ օտար երկիրներէ կարելի եղածին չափ մեծ թիւով :

Զ. Կը տրամադրեն հրաւիրել երկրէն արտասահման մեկնած հայերը վերստին Մոլտովա դառնալ :

Է. Կ'արտօնեն հայերն ու իրենց ծառաները դատուել միմիայն Իշխանական Ատեանին առջեւ, դաւաճներու տեղական պաշտօնեաները իրաւունք չունենալով միջամուխ ըլլալ անոնց գործերուն :

Ո՞Վ ԻՐ ՇԱՐԺՄԱՆ ԼԾԱԿՐ

Բայց այս պայքարը իր մղիչ ուժը ունէր :

Գրիգոր Պըլբըլուի կենսագրութեան մէջ, հրատարակուած 1914-ին ռուսահայկան Ակադեմիոյ կողմէ, կենսագիրը կը խօսի նաեւ անոր հօրը Յակոբ Պըլբըլուի կեանքին վրայ, մանաւանդ ծանրանալով անոր կատարած աշխատանքին շուրջ՝ հայ դպրոցներու կազմակերպութեան եւ հայոց քաղաքական իրաւունքներուն ստացման համար :

«Յակոբ Պայրբըլուի ասպարէզ իջնելէն առաջ, կ'ըսէ կենսագիրը, Մոլտովայի հայոց վիճակը շատ տխուր էր : Թէեւ Իշխանապետութեան մէջ հաստատուած դարերէ ի վեր, առանց մտածելու իրենց երկիրը դառնալ, հայերը, իրենց որդեգրած հայրենիքին մէջ, յաւիտենապէս նկատուած էին իբր օտարական : Ժողովուրդը, յոյն կրօնական մոլեռանդութեան ազդեցութեան տակ, զանոնք կը նախատէր ու կ'անարգէր առանց որեւէ պատճառի : Երկրին մետրապոլիտը կ'արգելէր հաւատացեալներուն սեղան նստիլ անոնց հետ եւ բնակիլ միեւնոյն յարկին տակ : Վեհապետները անոնց կը զլանային ամէն քաղաքացիական իրաւունք ի զօրու եղող օրէնքներու հիման վրայ՝ որոնք ժառանգուած էին յոյն ծագումով իշխաններէ :

«Այս կացութեան տեսելուն ոչ նուազ կը նպատակին իրենք հայերը, իրենց կենցաղով : Երկիւղի թէ հպարտութեան հետեւանքով՝ անոնք կը սիրէին շատ անհրաժեշտ յարաբերու-

թիւնները միայն ունենալ այն ժողովուրդին հետ, որուն ծոցը կ'ապրէին : Մեկուսացած աշխարհի մնացեալ մասէն, իրենք իրենց մէջ կ'ապրէին, պահելով իրենց լեզուն եւ կրօնը՝ ինչ որ բնական էր, բայց նաեւ իրենց պապենական բոլոր սովորութիւնները, նոյնիսկ ամենէն աննշանները, որոնք զիրենք կը զանազանէին Մոլտովայիներէն :

«Այս վիճակին անպատեհութիւնները ոչ ոք կրնար աւելի լաւ տեսնել քան թէ Յակոբ Պըլբըլուն, միայն անոր համար որ անոնք ջէին վնասեր իրեն այն առանձնաշնորհեալ դիրքին մէջ, զոր ինք իր ընտանիքով կը գրաւէր երկրին մէջ : Բայց ոչ ոք կրնար աւելի լաւ տեսնել ու սպասել այն մեծ բարենորոգումներուն, զոր ժամանակը կը վերապահէր բովանդակ երկրին համար, — հնարաւորութիւնը այս վիճակին բարուեքման, շնորհիւ ջանքերու որոնք պէտք էին գալ եւ իր կրօնակիցներուն կողմէ :

Յետոյ կը խօսուի այն ձեռնարկներուն մասին զորս պիտի տեսնենք ուրիշ գլուխի մը մէջ եւ որոնց դիմեց Յակոբ Պըլբըլու բարեկարգելու համար հայ վարժարանները եւ համայնքը օժտելու համար կազմական տիպար կանոնադրութեամբ, իրրեւ առաջին քայլը «հայ գաղութը ձուլելու համար տեղացիներուն մէջ՝ պահելով հանդերձ կրօնն ու լեզուն» :

Մինչեւ 1844 տեւեցին այդ ձեռնարկները՝ իսկապէս համայնքին ասպահովելով դպրոցական եւ իրաւական կազմակերպութիւն մը : Կը մնար կարեւորը սակայն, — հայ համայնքին ասպահովել քաղաքական իրաւունքները : Յակոբ Պըլբըլուի կենսագիրը կը շարունակէ .

«Ժամանակին պահանջներուն եւ պարագաներուն համեմատ, քաղաքական բարենորոգումներու իրականացումը օտար պետութեանց աջակցութեամբ միայն կրնար տեղի ունենալ : Այս աջակցութեամբ էր որ հայերն ալ կը յուսային ձեռք ձգել ամբողջական իրաւունքներ երկրին մէջ : Այսպէս, ըլլայ դրացի պետութիւններէն մէկուն կողմէ Իշխանապետութեան գրաւման ատեն, ըլլայ երկրին մէջ օտար քաղաքական Յանձնաժողովի մը կազմութեան առթիւ, Յակոբ Պըլբըլու առիթը չէր փախցնիլ ներկայացնելու, յիշատակագիրներով, իր կրօնակիցներուն ցանկութիւնները,